

Հաստատված է գիտխորհրդի
«20»_03_2013թ., հ.7 կիստի որոշմամբ
Գիտխորհրդի նախագահ, ռեկտոր



Գ. Գասաբյան



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ Վ.ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՌՈՒՍԱՅ ԼԵԶՎԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ

I. Ընդհանուր դրույթներ

1. Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի (այսուհետ՝ ԵՊԼՀ) Ռուսաց լեզվի և մշակույթի կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է ՀՀ օրենսդրության, ԵՊԼՀ-ի կանոնադրության և սույն կանոնադրության հիման վրա:
2. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններ կատարվում են ԵՊԼՀ-ի ռեկտորատի որոշմամբ:
3. Կենտրոնը ստեղծվում, վերակազմավորվում և դրա գործունեությունը դադարեցվում է ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի որոշմամբ:
4. Կենտրոնը ղեկավարվում է ԵՊԼՀ-ի խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորի հրամաններով:
5. Կենտրոնի անվանումն է.
 - հայերեն՝ «Ռուսաց լեզվի և մշակույթի կենտրոն»
 - ռուսերեն՝ «Центр русского языка и культуры»
 - անգլերեն՝ «Centre for Russian Language and Culture»

II. Նպատակը ու գործառույթները

Կենտրոնի նպատակը

նպաստել՝

- ռուսաց լեզվի, ռուս գրականության և ռուս մշակույթի տարածմանը Հայաստանում,
- ուսանողների և հիմնական ու ավագ դպրոցների աշակերտների հետաքրքրության խթանմանը ռուսաց լեզվի, ռուս գրականության և ռուսական մշակույթի ուսումնասիրության, նրանց կրթական և մշակութային մակարդակի բարձրացման հարցում:

Կենտրոնի գործառույթները

- Կազմակերպել համապատասխան ուղղվածություն ունեցող սեմինարներ, կլոր սեղաններ, սեմինարներ, դասընթացներ, վարպետության դասեր Երևանում և հանրապետության մարզերում:
- Համագործակցել Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանատան, Հայաստանում Ռուսիա համագործակցության ներկայացուցչության, արտերկրյա ուսումնական հաստատություններում գործող ռուսական կենտրոնների, ԵՊՀ-ի կենտրոնների հետ՝ փորձի փոխանակման և աշխատանքների արդյունավետ կատարման նպատակով:
- Էլեկտրոնային և համացանցային միջոցների շնորհիվ խթանել և ընդլայնել հետաքրքրությունը ռուսաց լեզվի և մշակույթի ուսուցման նկատմամբ:
- Կազմակերպել և իրականացնել ռուսաց լեզվի և մշակույթի օլիմպիադաներ, վիկտորինաներ Երևանում և հանրապետության տարածքում:
- Խրախուսել օլիմպիադաներում, վիկտորինաներում հաղթող ճանաչված ռուսանոյներին ու աշակերտներին:
- Կազմակերպել հանդիպումներ հայկական և ռուսական մշակույթի ներկայացուցիչների հետ՝ հայ-ռուսական մշակութային փոխհարաբերությունները զարգացնելու նպատակով:
- Կազմակերպել և անցկացնել Ռուսաստանի պատմությանը, գրականությանը, մշակույթին, ավանդական տոներին, նշանակալից իրադարձություններին նվիրված դասախոսություններ, միջոցարումներ, ֆոտոմրցույթներ, ցուցահանդեսներ ուսանողների և աշակերտների կրթական և մշակութային մակարդակի բարձրացման համար:

III. Կենտրոնի կառուցվածքը և ղեկավարումը

- Կենտրոնի աշխատանքները համակարգում է ԵՊՀ-ի ղեկավարը:
- Կենտրոնը ղեկավարում է Կենտրոնի ղեկավարը, որին նշանակում և ազատում է ԵՊՀ-ի ղեկավարը:

Կենտրոնի ղեկավարը.

- կազմակերպում է Կենտրոնի գործունեությունը և ապահովում է հիմնական աշխատանքների արդյունավետ կատարումը,
- իր լիազորությունների սահմաններում հանձնարարականներ է տալիս Կենտրոնի աշխատակիցներին,
- կազմակերպում և վերահսկում է Կենտրոնի գործավարությունը,
- պատասխանատվություն է կրում Կենտրոնի աշխատանքների որակի, խնդիրների լուծման և գործառույթների պատշաճ կատարման համար,
- Կենտրոնի ղեկավարը հաշվետու է համալսարանի ղեկավարի առջև,
- Կենտրոնի ղեկավարը պատասխանատու է Կենտրոնին հատկացված գույքի և սարքավորումների համար: